№ 30 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 13 ՕԳՈՍՏՈՍԻ 1894 № 30

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ" ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 գրան, կէս տարուանը 6 գրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Ցայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Սպահանից Մօհամմէդոյ (Ճանապարհորդութիւն). Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակ Հնդկաստանից. Արտաքին լուրեր.—Բանասիրական. Անա թէ ինչպիսի կրօնուսոյցներ ունինք. —Ցայտարարութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՀԱՆԻՑ ՄՕՀԱՄՄԷԴԱՑ

(Ճանապարհորդութիւն)

—

Սպահանը թողինք մայիսի 7-ին (Ն. տ.) և 16 օրուան տաժանակիր ճանապարհորդութիւնից յետոյ հասանք Շիրազ. Հայ ճանապարհորդները առհասարակ եկեղեցու սրահումն են իջևանում. ուստի ես և իմ ճանապարհորդակիցներս դիմեցինք այնտեղ. տէր Զաքարիայ Մարտիրոսեանը, տեղւոյս վիճակաւոր քահանան առաջին անձնաւորութիւնն էր որ մեզ ողջունեց:

Շիրազաբնակ հայերի մասին երկար գրել կարելի չէ. քանի որ գրելու նիւթ էլ չը կայ, 8—10 ընտանիքներ լրացնում են տեղիս հայերի թիւը, որոնք զբաղւում են օղեվաճառութեամբ, առևտրականութեամբ և գրագրութեամբ:

Ազգային մի որ և է իցէ շարժում գոյութիւն չունի այստեղ, չը նայելով որ 20-ի չափ տնուս երեխաներ գտնւում են այստեղ, բայց և այնպէս շիրազցի հայն դորանց կրթութեան մասին ոչինչ հոգ չէ տանում, գէթ դաղվինցիների օրինակին հետևելով և հէնց այդ պատճառով է որ պարսկերէնը ժողովրդական մի լեզու է դարձած, այնպէս որ հայերէնից աւելի սահուն և անսխալ է խօսւում:

Ծերունազարդ քահանայի գանգատները բազմաթիւ էին իւր փոքրիկ հօտի մասին, որոնցից մէկն էր իւր ռոճկի անհատոյց մնալն (յունվարից մինչև մայիս) և ուրիշ այդպիսի գանգատներ:

Մենք խորհուրդ ենք տալիս Շիրազաբնակ հայերին որ մի կողմ դնեն իւրեանց անձնական վէճերը և ձեռք ձեռքի տալով ջանան մի ազգային ոգի մտցնել իւրեանց շրջանի մէջ:

Շիրազումն է գտնւում Հաֆէզի և Սադիի՝ պարսից հռչակաւոր բանաստեղծների գերեզմանները, նաև Շիրազումն է գտնւում, Բաբաքուի կոչուած գերեզմանատնում, հայերիս մեծ քերթողի անմահ Մեսրովբ Թաղիադեանի գերեզմանը, որոյ արձանը կանգուն է մնում եկեղեցու սրահում:

Թէ ինչ պատճառներով, չը կարողացա իմանալ որ կառավարութիւնը արգիլած է այցելել, (յատկապէս քրիստոնեաներին) Հաֆէզի գերեզմանատունը, իսկ մենք պատեհութիւնը ձեռքից չը տալով՝ շտապեցինք նորա հարակից և պաշտօնակից Շէյխ Սադիի գերեզմանը այցելել, որն ամփոփուած է Դէլգօշայ այգիին կից մի ուրիշ փոքրիկ այգում: Հակառակ պարսից սովորութեան գերեզմանատունը ազատ է պահուած արտաքոյ կարգի զարդարանքներից, ամեն ինչ իւր պարզ դրութեան մէջ է գտնւում:

Վերջապէս՝ քանի օրեր դադար առնելուց յետոյ, հինգ հոգիներից բաղկացած մեր փոքրիկ կարաւանը մեկնեց Բուշիր երթալու դիտաւորութեամբ: Կանոնաւոր դնացքով 8 օրուան ճանապարհ է մինչև այնտեղ իսկ թէ որ իրաւունքը բոլորովին ջորեպանի ձեռքն թողուի 16 օրուան մէջ պիտի հասցնէ քեզ ուզած տեղդ: Շիրազից դէպի Բուշիր տանող ճանապարհը Պարսկաստանի ամենախիստ վտանգաւոր և տաժանելի ճանապարհնե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՀԱ ԹԷԴՆԶՊԻՍԻ ԿՐՕՆՈՒՍՈՅՑՆԵՐ ՈՒՆԻՆՔ

(Պատահած դէպքեր)

—

(Շարունակութիւն 29 թւից)

III.

Մօտենում է դարձեալ վերջին ամիսը, սկսւում է քննութիւնների ժամանակը: Տղայոց դպրոցի աւագ վարժուհի ու կրօնուսոյցի խնամի տիկ. Մ. Կեղծաւորեանը թեմական տեսչից շրջաբերական է ստացել, որով հրամայում է տարեկան տեղեկագիր կազմել: Շփոթութիւնից չէ իմանում ինչ անէ, ինքը ամբողջ տարում 49 դաս բաց է թողել, որովհետև ուսուցչական ցէնզ (արտօնութիւն) ձեռք բերելու համար դնում էր ռուսաց բարեգործական դպրոց եւ այնտեղ վարժւում էր փորձնական դասերով: Նա այնքան չէ մտածում իւր վերայ, որքան իւր խնամի կրօնուսոյցի վերայ, որը ամբողջ տարում միմիայն տղայոց դպրոցում 60 դաս է բաց թողել: Տեսնում է, որ առանց կրօնուսոյց քահանայի, որ եւ նախագահ է հոգաբարձութեան ինքը չի կարող գոյութիւն ունենալ այդ դպրոցում: Աւագ վարժուհին ստիպուած է տարեկան տեղեկագիր ներկայացնելու թեմական տեսչին, բայց ինչպէս անէ, որ կարողանայ իւր խնամու բաց թողած դասերը ծածկել: Նա ընկնում է ստստիկ մտատանջութեան մէջ, մտածում է, մտածում է... բայց հնարք չի կարողանում գտնել: Այդ միջոցին դպրոց է գալիս իւր տան ծառան եւ յայտնում է աւագ վարժուհուն, որ երեխան տանը լաց է լինում՝ ծիծ է ուզում: Աւագ վարժուհի տիկ. Կեղծաւորեանը շփոթւում է, թողնում է դասը եւ դասարանից դուրս գալուն պէս դռան մօտ հանդիպում է կրօնուսոյցին:

Տէր հայր, դու ամբողջ տարում բաց ես թողել 60 դաս,—դիմում է նորան տիկ. Մ. Կեղծաւորեանը,—թեմական տեսուչը հրամայել է ինձ տարեկան տեղեկագիր կազմել եւ իրան ներկայացնել, բայց այժմ չը գիտեմ, թէ ինչպէս անեմ, որ այդքան չը պարապած դասերը յայտնի չը լինին:

—Օրագրական մատեանում բաց թողած դասերի տեղ ինձ չիր ես նշանակել, հարցնում է կրօնուսոյցը:

—Ո՛չ, չը նայելով սովորաբար ամեն օր պէտք է նշանակել, թէ որ ուսուցիչ պարապել է եւ որ ուսուցիչը բացակայել է, բայց քո դասերի ստորագրութեան տեղերը բաց են մնացել, պատասխանում է աւագ վարժուհին:

—Ուրեմն շատ հեշտ միջոց կայ. վաղը ուսումը որ վերջանայ օրագրական մատեանը պահարանում չը պահես, այլ դասատան սեղանի արկղում դիր, ճաշից յետոյ ներս կը մտնեմ եւ չը պարապած դասերիս մեծ մասը կը ստորագրեմ,—պատասխանում է տէր հայրը ինքնաբաւական եւ հրապարտ կերպով, որ կարողացաւ այդ հեշտ միջոցը մի ակնթարթում գտնել:

Կրօնուսոյցը ինչպէս ասում է այնպէս էլ կատարում է, միւս օրը երեկոյեան ժամը աւարտելուց յետոյ ծածուկ բաց է անում տղայոց դպրոցի առաջին դասարանի դուռը, մտնում է ներս եւ 60

րից մէկն է համարւում, գրեթէ բոլորն լեռնային և ապառաժուտ ճանապարհ է, ճանապարհորդը բոլորովին ինքնամոռացութեան մէջ է ընկնում երբ իրան տեսնում է անհասանելի բարձր լեռների գագաթին, որից նոյն իսկ վար նայելը սարսուռ է ազդում, ճանապարհը ոլորմոլոր է, քարակտորներից շինուած, որտեղից զգոյշ և ծանր քայլերով պէտք է ցած իջնել։ Այս լաբիւրինթոսանման լեռնային ճանապարհներին „Քոթալ“ են անուանում, որոնց աջ ու ձախ կողմերն տարածւում են անյատակ անդունդներ, որ նայողի աչքերն սկսում են սեւանալ, Քոթալները վեց են որոնք կրում են հետեւեալ անունները Ջին Սէֆիդ, Փիրեզան, Դոխտար, Քեամարէջ, Թանգթորքան և Մալու։ Վերջինը ամենասարսափելին է։

Ճառախիտ անտառները պակաս չեն ճանապարհում, որոնց մէջ և գտնւում են վայրենի գազաններ, ուստի կարաւանը զերծ պահելու պատառող գազանների վտանգից և աւազակներից, կառավարութիւնը հրացանակիր պահապաններ է դրել որպէս զի հսկեն ճանապարհների ապահովութեան և ճանապարհորդների հանգստութեան վերայ։ Բուշիրի ճանապարհը Պարսկաստանի ամենաբանուկ ճանապարհներից մէկն է, դա միակ ճանապարհն է որի միջոցով պարսից Ծոցից ներածուած բոլոր ապրանքները փոխադրւում են քաղաքից քաղաք։

Վերջապէս հասանք Բուշիր, պարսից Ծոցի նաւահանգիստը, քաղաքի արտաքին դրութիւնը գրաւիչ չէ, եղանակը սաստիկ տաք է։ Վաճառականութիւնը ծաղկած դրութեան մէջ է այստեղ, British India Steam Navigation Coy-ի շոգենաւերը Լոնդոնից և Bombay and Persian Steam Navigation Coy-ի շոգենաւերը Բոմբէից ամեն շաբաթ հասնում են այստեղ, քաղաքից մէկ փարսախ հեռու խարիսխ են ձգում և մէկ կամ երկու օր կանգ առնելուց և իւրեանց ապրանքները յանձնելուց յետոյ թողնում են Բուշիր գնում Բասրայ. միայն երկու նաւեր կան որ իւրեանց տեղը շարունակ մնում են՝ դրանք անգլիացւոց Lawrence և պարսից Persepolis պատերազմական նաւերն են։

Բուշիրում 15 հայ ընտանիք կայ որոնք գրեթէ բոլորն էլ վաճառականութեամբ զբաղւողներ են, ամենից նշանաւորն պ.պ. Մէլքումեանների հռչակաւոր վաճառականական տունն է, ճշմարիտ որ ուրախալի մի երեւոյթ է տեսնել մեր համազգիները առեւտրականութեան ասպարիզում այլազգիների հետ մրցող և յաղթող հանդիսացող, որպիսին են Մէլքումեանները։ Սրանք իրանց առեւտուրի շրջանը ընդլայնելու նպատակով մտադիր են կարճ ժամանակից յետոյ Թէհրանում ևս մի ճիւղ բանալ ինչպէս „Շաւիղը“ արդէն հաղորդել էր։

Բուշիրում դպրոց չը կայ և ոչ իսկ այլազգի կրթական մի հաստատութիւն թողեալ մի եկեղեցի, այստեղից 10 օրուայ ճանապարհ է մինչև Բոմբէյ, այդ պատճառով բուշիրցի հայն աւելի յարմար է գտնում իւր որդին ուղարկել այնտեղ կրթուելու, մէկ խօսքով անգլիերէն սովորելու։ Ն. Ջուղայի բողոքական միսիոնարները մի քանի տարի առաջ այստեղ մի վարժարան էին բացել բայց թէ ինչու չը շարունակեցին այդ գործը, պատճառը յայտնի չէ։ Պ. Կ. Ջէյթունը որ ազգասէր և ուսումնասէր մէկն է ինչպէս լսում ենք մեծ ջանք է գործ դրել այստեղ մի ընթերցարան հաստատելու բայց չէ յաջողել, այս մի յարմար առիթ սեպելով Բուշիրի հայ հասարակութեան յատուկ ուշադրութիւնն ենք հրաւիրում մի դպրոց և մի ընթերցարան ունենալու վերայ։ Քսաներկու ժամուայ ծովային ճանապարհորդութիւնից յետոյ հասանք Մօհամմէռայ, որը Կարուն գետի եզերքի վերայ շինուած մի արաբաբնակ գիւղաքաղաք է։ Անգլիացի յայտնի վաճառականներն Լինչ և եղբայրք չորս տարիներից ի վեր Կարուն գետի նաւարկութեան առանձնաշնորհումն ստացել են, որոնց շոգենաւերը Բասրայից Ահվազ և Ահվազի Շուշտար ամիսը երկու անգամ երթեւեկում են։ Նաւարկութեան այս կողմերում մուտք գործելն մեծ պատճառ է դարձել շրջագայ աւանների մշակութեան և առեւտրականութեան ծաւալմանը։ Արմաւն այս կողմերի ամենագլխաւոր բերքն է որը մեծ քանակութեամբ արտածւում է Եւրոպա և այլ տեղեր, ցորենի, բրինձի և բամբակի մշակութիւնը և արտածութիւնը ևս հետզհետէ ճոխանում են։ Կարուն գետը թափւում է Շաթ-օլ-Արաբ գետի մէջ (որ Տիգրիս և Եփրատ գետերի միացումն է) գետի այս և այն եզերքների վերայ տեսնւում են անթիւ արմաւենիներ որոնցից ժողովուրդը մեծապէս օգտւում է։ Կարուն գետը բազմամարդ շուկայի է նմանում որտեղից արաբները իւրեանց բեռնակիր նաւակներով այս գիւղից այն գիւղը մթերքներ փոխադրելու համար անցուդարձ են անում։ Մօհամմէռայ իջեւանեցինք նորջուղայեցի պ. Բագիլ Բագիլեանի մօտ, որ Լինչ ընկերութեան գործերի անօրէնն է, այս անձ թէև երկար տարիներ հեռու է ընկած հայ ընկերական շրջանից և ապրել է արաբների մէջ բայց և այնպէս դեռ չէ մարած նորա մէջ հայութեան ոգին։

Ուղեւոր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դավրէժ, 1 օգոստոսի 94

Ձեր թերթի 25 թւի Բանասիրականը Լիլաւայ թաղի երկսեռ դպրոցների հաշիւների և հոգաբարձուաց գոր-

---

չը պարապած դասերից 53-ը ստորագրում է օրագրական մատեանում:

IV.

Մայիս ամսի վերջն է եւ յունիսյ երեկոներից մէկը վերոյիշեալ երկսեռ դպրոցի դահլիճում հաւաքուել են նոյն դպրոցի ուսուցիչներ եւ ուսուցչուհիները եւ խօսում են քննութիւնների մասին, սպասելով կրօնուսոյց քահանային եւ նրա խնամի տիկին Կեղծաւորեանին:

Օրիորդաց ուսումնարանի դահլիճի մէջ տեղը դրած է մեծ սեղան, վրան կանաչ մահուտ փռած եւ մամակալներ, ցուցակներ, թղթեր, մատիտներ, գրչակոթներ եւ թանաքամաններ դարսած:

Այդ երեկոյ մանկավարժական ժողով կայ երկսեռ դպրոցի հարցաքննութիւնների համար:

Վերջապէս գալիս է մանկավարժ-կրօնուսոյցը իւր խնամի տիկ. Կեղծաւորեանի հետ: Ամենքը հաւաքւում են դահլիճում եւ նստում են իրանց տեղերը:

Նախագահ ընտրւում է օրիորդաց ուսումնարանի աւագ վարժուհի տիկին Ցայտնեանը, իսկ քարտուղար ընտրւում է նոյն դպրոցի դծագրութեան ուսուցիչ պ. Դ. Մուրճեանը:

Նիստը բացւում է. Նախագահը կարդում է այն օրուայ ժողովի պարապմունքի ծրագիրը:

Ժողովը վճռում է տղայոց եւ օրիորդաց դպրոցների առաջին բաժանմունքները քննութեան չենթարկել, այլ փոխադրել, կամ թողնել միեւնոյն դասարաններում տարեկան թւանշաններն ի նկատի առնելով, իսկ մնացեալ բաժանմունքների աշակերտներին ու աշակերտուհիներին հարցաքննել: Այդ վճռին ընդդէմ են կենում միմիայն կրօնուսոյցը եւ իւր խնամի տիկին Կեղծաւորեանը ակնարկելով, թէ,

—Ինչ հարկաւոր է քննութիւն, կամ իզուր ինչու ենք չարչարւում, ամենքին էլ տարեկան թւանշաններով փոխել տանք ու վերջացնենք:

—Իհարկէ, եթէ մենք մտածենք մեր չարչարանքի համար իսկապէս քննութիւնները աւելորդ են, բայց հարցաքննութիւններն այն նշանակութիւն ունին, որ իսկոյն երեւում է ուսուցչի աշխատանքը եւ պարզապէս նա վարձատրւում է, ասում է պ. Մուրճեանը, որ մինչեւ այդ ժամանակ լուռ նստած էր եւ ժողովականների կարծիքն էր արձանագրում:

Կրօնուսոյցը տեսնելով, որ իւր առաջարկութիւնը մերժուեց, փոքր ինչ շփոթւում է եւ յայտնում:

—Գիտէք, պէտք է յայտնեմ ձեզ, որ քննութեան ժամանակ ոչ ոք իրաւունք չունի ներկայ լինելու:

—«Եկեղեցական ծխական դպրոցների կանոնքի» 561-ի համաձայն ամեն ոք իրաւունք ունի հարցաքննութեան ժամանակ ներկայ լինելու եւ տեսնելու, թէ ուսուցիչները ուսումնարանում ինչ են անում: Հարցաքննութեան օրը մենք պարտական ենք հասարակութեանը հաշիւ տալու: Մենք իրաւունք չունենք կողմնակի անձերին արգիլելու, որ քննութեան ժամանակ ներկայ չը լինին, ընդդիմախօսում է հայոց լեզուի ուսուցչուհի տիկին Ն. Ազնիւեանը, որ լսելով կրօնուսոյցի եւ նրա խնամի տիկին Կեղծաւորեանի յայտնած մտքերը ժպտում էր:

Տիկին Կեղծաւորեանը ամեն ճիգ թափում է կրօնուսոյցի առաջարկութիւնները պաշտպանել, բայց չի յաջողւում, որովհետեւ հինգ ձայն միշտ յաղթում

ծուխէութեան մասին խօսում, և վերջերումը պ. յօդուածագիրը գրում է թէ զարմանալի է ինչու լիլավացիք չեն հարցնում պ.պ. Ս. Փանուէլեանցից և Ա. Գուլամաեանցից քանի տարի առաջ որ հոգաբարձու ընտրուած էին խոյս տուին նրանց պաշտօնից, և այս անգամ քաղորների, փեսաների և խնամիների ձայների ուժով ընտրուելով ընդունեցին այդ պաշտօնը։

Ես իմ կողմից չեմ ուզում երկար բարակ խօսել այդ մասին միայն այսքանը կարող եմ ասել, որ ես շատ տարիներ հոգաբարձութեան պաշտօնը վարած եմ, լաւ թէ վատ դա Լիլաւա Թաղի հասարակութիւնը լաւ գիտէ թող ձեռքը խղճի վերայ դնելով վկայէ, բացի այդ պաշտօնը ուրիշ որ և է ընտրութեան համար, երբոր ժողովներ կայացել է շատ անգամ Գովրէժու հասարակութիւնը ինձ ձայն է տուել, զօր. անցեալ տարի եպիսկոպոսի ընտրութեան համար առաջնորդարանում երկու թաղից ընդհանուր ժողով կազմելով մի քանի անձինք մասնախումբ ընտրեցին, ես որ բացակայ էի ամենից շատ քուէ ինձ տուել էին, ոչ թէ սա, այլ շատ ուրիշներ զոր մի մի թուելու հարկ և միջոց չը կայ։ Լաւ միթէ մարդ իւր ազատ կամքի տէրը չէ, ինչպէս որ վերն յիշեցի շատ տարիներ այդ պաշտօնը վարած էի, մի անգամ էլ ըստ հանգամանքների պահանջմանց խոյս տուած լինինք, ինչ կը լինի։

Ս. Փանուէլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թեհրանի Ազգային Ուսումնասիրաց Ընկերութեան նախաձեռնութեամբ, մի ուսուցիչ է ուղարկուել Քազազ գաւառը, որտեղի հայերը. դարերից ի վեր զուրկ են մնացել կրթութիւնից։ Յոյս ունինք որ նոր ուսուցիչը համաձայն իւր կոչմանը կատարեալ քաջալերութիւն կը գտնէ այնտեղի ժողովուրդից և յաջողութեամբ առաջ կը տանէ կրթական գործը այդ գաւառի հայաբնակ բազմամարդ գիւղերում։

—

Ամենահաստատ աղբիւրներից լսում ենք որ ամենամօտ ժամանակներումս, Թեմիս սրբազան առաջնորդ Եսայի եպիսկոպոսը այցելութեան է գնալու իւր Հնդկաբնակ հօտին. դոյն իսկ պատճառով Ն. Ս. սրբազնութիւնը խնդրամատոյց է եղել ազգիս Վեհափառ Հայրապետին, որ բարեհաճէ մի վարդապետ ուղարկել, որպէս զի իւր բացակայութեան միջոցին իբրև տեղապահ փոխանորդէ իրան։

—

Թեհրանի հայկական երաժշտական խումբը վեց ամիսների յոգնատանջ նեղութիւններից յետոյ նուագում է մի ազատաղեալ „Կապոյտ Երկինքում“ եղանակը։ Այդ յառաջադիմութիւնը յուսադրում է մեզ լսել գոնէ ձմեռուայ մօտ օրերում, մի կօնցերտ, Ֆաուստից, Այտաից, Ուվէռթիւռներից, Սօմնամբիւլներից և այլն և այլն....

—

Ռաշտի մեր թղթակիցը մեզ գրում է հետևեալը։ Ղևոնդ քահանայ Միրիմանեանը, իւր Մազանդարան եղած ժամանակ, մի հանգանակութիւն է բացել, յօգուտ Ռաշտի երկսեռ դպրոցների, և հաւաքել է 1060 ղռան։ Քնարակեազից 400 ղռան. Բարֆրուշից և Մաշադսարից 660 ղռան, ընդ ձեռներեցութեամբ պ.պ. Դաւիթ և Իւան Փանեանցների և Սարգիս Բաղդիեանցի։ Գովելի է տէր հօր այդ յատկութիւնը, որ երբէք չէ մոռանում այն դպրոցը, որտեղ ինքը, ժամանակ առաջ ուսուցիչ է եղել, միշտ աշխատում է բարւոքել դպրոցի վիճակը, իւր մտածողութեան գլխաւոր առարկան դպրոցը բարեկարգելու մասին է։ Թող ամաչեն այժմ այն պարոնները, որոնք ամեն անգամ բարձրացրին նորա քահանայ ձեռնադրուելու ժամանակ։

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ Ռաշտի Ընթերցասիրաց ընկերութեան յօգուտ օրիորդաց դպրոցի պատրաստած վիճակախաղը, ահա ութերրորդ ամիսն է որ առկախ դրութեան մէջ է, շնորհիւ պ. գանձապահի, որ տոմսակները դրել է արկղի մէջ և ջանք չէ անում ծախելու համար։ Միթէ խօսքը պաշտօն ստանձնելն է, պէտք է նաև գործել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ

—

Բոմբէյ, 25 յուլիսի 94

Բոմբէյի հայ հասարակութիւնը բաղկացած է միայն 6 ընտանիքից, որոնցից հինգն կապուած են իրար հետ ընտանեկան կապով, մնացած մի ընտանիքը լինելով Բաղդադի հայերից ոչինչ կապակցութիւն չունէ միւս հինգ տների հետ։ Մենք չենք ցանկանում խօսել նորանց ընտանեկան գործերի մասին, այլ թէ կը դառնանք դէպի նորանց ազգութիւնն, կրօնն և եկեղեցին։

Բոմբէյի հայ երիտասարդները կը լինեն 10 հոգու չափ, բայց շատ ցաւալի է ասել որ նրանք ամաչում են ասել թէ հայ են, կարծելով թէ հայ լինելն և կամ հայերէն խօսելն մի մեծ խայտառակութիւն է իրանց համար։

Պատահել է որ այստեղի երիտասարդներից մի քանիսը իւրեանց մի բարեկամ հայի տանը, հանդիպել են մի նորեկ հայի թէև նրանք գիտեն, որ այս նորեկը անգլիերէն չը գիտէ, բայց նրանք սկսում են նորեկի հետ անգլիերէն խօսել։ Նորեկը չը հասկանալով՝ թէև պատասխանում է թէ անգլիերէն չը գիտէ, սակայն նրանք կրկին շարունակում են իւրեանց խօսակցութիւնը ի հարկէ անգլիերէն, ո-

---

եր երկու ձայնին։

Նախագահի առաջարկութեամբ սկսում է ընթերականներ նշանակելու մասին խորհրդակցութիւն։

—Ես առաջարկում եմ, որ ընթերականներ չը լինեն, այլ քննողը լինի միմիայն դասատու ուսուցիչը իսկ սոյն դպրոցի ուսուցիչները բոլորովին իրաւունք չունենան քննութեան ժամանակ հարցեր առաջարկելու աշակերտուհիներին եւ աշակերտներին, ասում է տիկ. Կեղծաւորեանը։

Սոյն կարծիքին է եւ կրօնուսոյցը։

—Էլ ինչ քննութիւն եթէ միայն դասատու ուսուցիչը պիտի հարցնէ, առանց ընթերականների, այդպիսի քննութիւն ամեն դասին լինում է, ակնարկում է երգեցողութեան ուսուցիչ պ. Ս. Տէր-Սրեանը որ մինչեւ այդ ժամանակ ձայն չէր հանում, այլ միմիայն լսում էր այս ու այն ուսուցչի առաջարկութիւնները ու ընդդիմախօսութիւնները։

—Իւրաքանչիւր ուսուցիչ, որ չի վախենում իւր քննութիւնից եւ յուսով է, որ քննութեան ժամանակ պարզ երես դուրս կը գայ, նրա համար միեւնոյն է ընթերական լինի թէ ոչ, նկատում է դծագրութեան ուսուցիչ պ. Դ. Մուրճեանը։

Վերջապէս տիկ. Մ. Ցայտնեանը, իբրեւ նախագահ, կրօնի ընթերականներ նշանակում է պ. պ. Տէր- Սրեանին եւ Դ. Մուրճեանին։

Յարգելի ընթերցող, որ զարմացած ես կրօնուսոյցի արարքի վերայ, ցաւում ես որ այդպիսի կրօնուսոյցը բարոյախօսութիւն է ուսուցանում մանուկ սերնդին, դիտիր մի րոպէ այդ կրօնուսոյցի դէմքը, զարհուրելի տպաւորութիւն կը թողնէ քեզ վերայ։ Այդ միջոցին նորա դէմքը գունատւում—այլայլւում է, ունքերը կիտւում են եւ իրան կեղծելու համար սարթնած շրթունքների միջից յաղթական ժպիտ է երեւացնում։ Բարկութեամբ լցուել է նրա սիրտը։ Դարձեալ ժպտում է եւ արհամարհական ակնարկով յայտնում է ժողովին։

—Ես կրօնի ընթերական չեմ ընդունում, ես դրսից ինձ համար ընթերական կը հրաւիրեմ նրան ում որ ցանկանում եմ, դուք ձեզ համար ընթերականներ նշանակէք։

—Այո, շատ ուղիղ է ասում տէր հայրը, մենք մեզ համար ընթերականներ նշանակենք, իսկ տէր հօրը ազատ կացուցանենք այդ պարտաւորութիւնից, թող այնպէս անէ ինչպէս ուզում է, մենք իրաւունք չունինք նորա խօսքից անցնելու, դա այստեղ հոգաբարձութեան նախագահ է, պատասխանում է տիկ. Կեղծաւորեանը, որ կրօնուսոյցի պէս ինքն էլ է շփոթւում եւ չը գիտէ ինչպէս ազատէ իւր խնամուն այդ սարսափելի խայտառակ դրութիւնից։ Դուք ճնշումէք ինձ եւ տէր հօրը, բայց իմացէք, որ առաջնորդը մեզ հետ շատ լաւ է...։

Զարմացումը պաշարում է բոլոր ժողովականներին, նրանք տեսնում են տիկ. Կեղծաւորեանի եւ իւր խնամի կրօնուսոյցի արարքն ու ծանր տպաւորութիւն է թողնում նրանց վերայ։

(Կը շարունակուի)

րով Նորեկն պատահմամբ հանդիպում է ճանապարհին իւր ծանօթ երիտասարդներից մէկին և սկսում է մի քանի հարցուփորձ անել։ Երիտասարդն չէ պատասխանում քանզի նորանց ետևից մի անգլիացի է անցնում, երբ որ այդ անգլիացին անցնում է մեր հայ երիտասարդի լեզուն ևս բացւում է։ „Չէ՞իր տեսնում որ այդ պարոնն անցնում էր մեր ետևից, ինչո՞ւ հայերէն խօսեցիր հաւանական է որ նա մեզ լսած լինի“ պատասխանում է երիտասարդն։ Եթէ խօսակցութեան ժամանակ, մի եւրոպացի հարցնէ թէ „ի՞նչ եկեղեցու ես պատկանում“ նա կը պատասխանէ թէ „Church of England“ (անգլիական եկեղեցու) ինչո՞ւ այս պարոնն ամաչում է ասել թէ ինքն հայ է և հայոց եկեղեցուն է պատկանում։ Միթէ հայոց ազգն և եկեղեցին պակաս են օտար ազգիներից...։

Բոմբէյի հայ հասարակութիւնն, որպէս կասեն, „Low opinion“ ստոր կարծիք ունին պարսկահայերի վերայ, թէ ինչո՞ւ այդ ես չգիտեմ։ Միայն այս երկու խօսքն կասեմ Բոմբէյի հայ հասարակութեան՝, որ պարսկահայերն որքան որ ստոր մարդիկ լինին, նոցա մեծ մասն չեն մոռանում իրանց ազգութիւնն, և կրօնը, և պաշտպանում են իւրեանց եկեղեցին։ Արդեօք Բոմբէյի հայերն մի և նոյն են անում.....?

Պարսկահայերի մեծ մասը ուղարկում են իւրեանց որդիքը Կալկաթա թէ իւրեանց իսկ ծախքով և կամ ձրիապէս։ Ոչ թէ միայն անգլիերէն սովորելու այլ թէ իւրեանց մայրենի լեզուն ևս։

Մինչև այսօր Բոմբէյի հայերից ո՞ր մէկն է ուղարկել իւր որդուն Կալկաթայ իւր մայրենի լեզուն սովորելու համար։ Եթէ նրանք չէին ցանկանում, իւրեանց փողերը վատնել, կարող էին մինչև անգամ խնդրել այժմեան վիճակաւոր քահանայից որ իւրեանց որդւոց մի քանի բառ հայերէն սովորեցնէր։ Միթէ՞ քահանան կը խնայէր նորանցից։ Ոչ, հայերէն սովերելը անօգուտ է..... Ահա թէ այս խօսքի հետևանքը ինչ է։ Գրեթէ ոչ մէկ հայի տնում մի հայերէն լրագիր չէ գտնւում։ Նորանք չը գիտեն թէ ինչպէս իրանց հայ եղբայրները սոված մեռնում են Հայաստանի զանազան մասերում և կամ թէ նոքա ինչ տանջանքի և չարչարանքի մէջ են։ Նոքա մինչև իսկ չը գիտեն որ Խրիմեան Հայրիկին զանազան կողմերից մեծ թէ փոքր գումարներ են ուղարկում յօգուտ սովեալներին։ Ոչ. նոքա ոչինչ չը գիտեն քանզի հայերէն գրել և կարդալ չը գիտեն։ Զէ՞ որ հայերէն սովորելն անօգուտ է։

Բոմբէյի ս. Պետրոս եկեղեցում 2 թէ 3 շաբաթը մէկ պատարագ է լինում, եկեղեցում ներկայ են գտնւում, քահանան, մի քանի տիրացուներ, որոնցից միայն մէկն է բոմբէյցի, մի քանի օտարական հայեր, իսկ Բոմբէյի հասարակութիւնից միայն մի տուն։

Ժողովրդի ծերերն գրեթէ ամենևին չեն հաղորդւում, իսկ երիտասարդները մինչև անգամ եկեղեցի չեն գնում։ Նոքա գնում են օտար եկեղեցի, և ճաշակում են այնտեղ։ Եւ եթէ հարցնում ես „ինչու քո մայրենի եկեղեցին չես գնում“ պատասխանում է թէ „ժամերգութիւնը չեմ հասկանում“ և կամ թէ հազար և մէկ տեսակ ուրիշ պատճառներ է տալիս։ Ոչ, ես կարծում, որ նորանք գնում են օտար եկեղեցի քանզի այնտեղ պիանօ և կամ հարմօնիօմ կայ, որոնցից ոչ մէկը մեր եկեղեցում չէ գտնւում, կամ թէ նորանց եկեղեցին զարդարած է՝ իսկ մերը ոչ։ Ո՞չ թէ այս վերջինն էլ ժողովրդոց պակասութիւնն է։

(Կը շարունակուի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Օգոստոսի 7-ին Լոնդոնից հեռագրում են որ երեկ գիշեր Անգլիոյ արտաքին գործոց նախարարը ազգային երեսփոխանական ժողովում ասաց թէ ճապօնացւոց կառավարութիւնը խոստացել եւ հրաշխաւորել է որ Շանխայի եւ նորա շրջակայքում պատերազմ եւ խռովութիւններ չը յարուցանէ, ուստի եւ չինացւոց կառավարութիւնն էլ արգելք չէ լինելու որ նաւեր մտնեն այդ նաւահանգստին. երկու կառավարութիւններ որ միմեանց հետ պատերազմ ունին իրաւունք չունին արգելք լինելու չէզոք նաւերին, միայն եթէ յիրաւի չէզոք նաւերը ճանապարհ կտրելու կամ պաշարման մտադրութիւն չունենան, այս առթիւ արդէն ժամանակից առաջ յայտարարուել է: Գերմանիոյ Կայսրը հասել է Քօօս: Նոյն Թուին Փարիզից հեռագրութիւն թէ Չինաստանից լուր է հասել որ Թիբէթի ցեղերից ոմանք Գոտրէլ անունով ֆրանսիացի ճանապարհորդին ծեծել են գետը եւ ջրահեղձ արել: Չինացւոց կառավարութիւնը. այս դէպքի մասին ցաւակցութիւն է յայտնել եւ նորա ընտանեաց փոխարինութեան մի խոստում է արել:

—Օգոստոս 8-ին Տօկիօում ճապօնացւոց զօրքին օգնութիւն է հասել: Նաշանում Չինացիներից մի քանի բերդեր եւ ամրութիւններ առնուել են, ճապօնացիք արդէն կարեւորագոյն տեղերի տիրել են, ճապօնական ամբողջ ժողովուրդը ոգեւորուած է եւ բոլորն էլ պատերազմի պատրաստականութիւնն ունին:

— Լոնդոն օգոստոսի 8-ին: Թայմզը մի լուր է հրատարակել Հօնկ-Քօնկից թէ հրամանատար Քուանկ-Թուանկը 5000 նոր զօրք է ժողովել, եւ Քանթօն գետի բերդի ամրացման միջոցներ է ձեռք առել եւ այնտեղի պահապան զօրքը աւելացրել է: Բալմորա նաւի մէջ ասիական խոլերան երեւան է եկել եւ այդ նաւը նորերումս մտել է Պետերբուրգ, այդ ախտից մէկ հոգի մեռել եւ հինգ հոգի բռնուել են.

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Դավրէժ—Յ. Բ. Յ. „Շաւիղի“ մէջ հրատարակելու ամենագլխաւոր պայմաններից մէկն էլ անկեղծութիւնն ու քաղաքավարութիւնն է որոնցից զուրկ են դժբաղդաբար եւ ձեր գրուածները, որով եւ չեն կարող տպուել:

Դավրէժ— Ա. լրագրական օրէնքներին քաջ տեղեակ պէտք է լինէիր: Ինչպէս կարելի է տպել մի անստորագիր յօդուած:

Դ.ղլար—Ա. Մ. Բ. Ձեր բաց նամակը ստացանք պակաս Թուերը շատոնց արդէն սպառուել են մնացած Թուերը շարունակաբար ուղարկւում են Ձեզ:

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զեռնտու. արժէքներով պատրաստ եմ գնելու ՊԱՐՍԻՑ կամ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԻՆ, ՆՈՐ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐ: Խնդրում է վաճառողներից ուղարկել իւրեանց ՆՄՈՅՇՆԵՐԸ վերջնական արժէքը յայտնելով: Պատասխանները ընդունելի չեն:

Դիմել Հրանտ Յ. Մարիմեան Դավրէժ

Սոյն...94 թուից Դավրէժում կազմուած է „Ընթերցասիրաց“ գրադարանական ընկերութիւն, որի նպատակն է ժողովրդական գրադարաններ բանալ Ատրպատականում: Ընկերութիւնը սրտանց դիմում է յարգելի հեղինակներին, հրատարակիչներին եւ նուիրատուներին, որ բարեհաճեն յօգուտ ընկերութեան դրուելիք նիւթական եւ այլ նուէրներն ուղարկել „Շաւիղի“ խմբագրութեան:

Դավրէժում մեր հասցէն է՝

„Ընթերցասիրաց“ գրադարանական ընկերութիւն, Société de la Bibliothèque „des Amis des lettres“ Tauris (Perse)

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ,

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ Ձ. Ռ. ՄԻԼԼԷՐ

Թարգմանութիւն անգլիերէնից

Մամիկոն Մ. Գրիգորեանցի

Գիրքը բաղկացած է 3 հատորից.

Տպագրւում է առանձին առանձին.

Գինն է՝ Պարսկաստանի համար 1 ղրան. արտասահմանի համար 25 կոպէկ.

Դիմել՝ Մամիկոն Մ. Գրիգորեանցին Թէհրան.